

պատուական զոհարներն աշխարհիս սր կողմերումն էին մասնաւորապէս գտնուում այդ հեռաւորագոյն՝ և յայտնապէս մեզ այժմէականացս անձանօթ ժամանակներում: Նորա որք այդ զոհարների հանքերն զեռեղում են Արարիոյ հիւսիս-արեւելեան սահմաններում, այսինքն է՝ Շոտ-ալ-Ալբարի մօտերում, թէպէտեւ արդիւնք հանձարեղ հեռագոտութեանց, սակայն եւեթ՝ կարելի է միայն համարել զայնս որպէս լոկ անձնուր մտացածին խղճամիտ համոզմանց ենթադրութիւնք: Իսկ ներհուսն հնարանն, Dr. Botsford, իւր History of the Ancient World, զրքին մէջ, հիմնեալ հին և նոր ապացոյցների վերայ, հաւատում է, որպէս առանձնայատկութիւն ի հնուսն, թէ՛ «Colchis yielded gold, և որովհետեւ Փասիս ընթանում էր, և զեռ ընթանում է, Կողքիս գաւառի (Լազիստանի) մէջջոյն ամեղ սւր ոսկին էս, որքեմն առանցք փաստիք, Փասիս զեռն նոյն է որպէս կտակարանական Փիսոյն»:

Արդ՝ ի վերջոտնութիւն մեր նիւթին պատկանելի մինչ ցարդ արձանագրեալ ուսումնասիրութեանց, վերադառնանք անգամ մի ևւս, առ քան զամենայն հիմնականորէն կարեւոր փաստն, սն: զեռ ելանէք յնկեմայ օտոզանել զԻրախան, և անտի բաժանի ի չորս առաջնս (Մնն. Ե. 10): Տեսինք որ այդ չորս զեռերի արտադրող աւազաններն գտնուում են մեր Հայաստանի բարձրաւանդակներում, ոչ հետի ի միմեանց: Սակայն ի՞նչ էր Մոպսէսի միտքն իւր նկարագրութեան ինքեցին առնչութեամբ: Ինչ ասելով (և Մոպսէս չէ ասում զեռ մի) չպիտի հասկանանք որպէս թէ այն մի նիւս զեռ էր անդ ի ծագմանն, այլ ծննդակից նոսաններ օրք, զոտոզանելով զԻրախանս, անտի, այսինքն է՝ Իրախանն, բաժանում էին չորս առաջների, հոսելով առ ծոյու հաւասարութիւնն, ըստ բնական օրինաց,

Փիսոյն (Փասիս) առ արեւմուտս,
Գեմոյն (Երասիս) առ արեւելս,
Նիփոսիս, առ արեւմուտս և անտի առ հարաւ,
Տիգրիս, առ արեւելեան-հարաւ:

Ահաւասիկ, վերիշեալ հիմանց վերայ է (յուսամք ոչ անտրամարանական), որ լոկ եւեթ զբազուելով առնչութեամբ եղեմական գեռերին՝ ըստ նոցին նկարագրու-

թեանց Մուրր Գրոց մէջ, գտահացանք յիւեալ չորս զեռերի ծագման աղբիւրներն, ըստ մեր խուղարկութեանց, վերընծայել այն երկրին զոր մեք սիրած ենք կոչել մեր Հայաստան աշխարհ:

Լճեղոնց Ս. ՏԷՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
(Նոր Զուլայեյ)

ՊԵՂԵՂՈՅ ԿՍՔՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Ե.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ի. ԹԼԿՈՒՐԱՆՅԻ
1889 ՅԵՂԻ. 26 ԵՍ.— Ի 1525

(Շար.)

ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆԸ

Թղիւրանցիին ամենէն յայտնի և ամենէն որսուիչ կողմը եղած իր բանաստեղծութիւնը, էջ ընտրած նիւթերով, իր արուեստով և իր լեզուով: Այլ չան, Կ. Կոստանեանց, Լ. Ղեռնդ Յովնանեան և Ա. Զօղանեան իրենց արժէքաւոր աւսումնասիրութիւններով և գնահատումներով Թղիւրանցիին տուած են միջնադարեան հայ ազգասացներու շարքին մէջ առաջին տեղը:

Թղիւրանցիի բանաստեղծութեան նիւթը, ասիկա տեսանք վերեւ, մեծ չափով սկսն է և զեղեղկաթմբ կնոր: Գծուած պատկերները ըստուգիւ կենդանի, զեղեղկ և զբաւիչ են: Հոգեւորական մը ի՞նչպէս կրցեր է այսքան անպատու համարմոկ կերպով զբաղիլ այսպիսի հուանի նիւթերով և տաղել և կրգել զանտէր(«):

Թղիւրանցիի արուեստը իրապէս խորհրդապատական է: Այդ բոլոր սիրուն տաղեր ու երգեր, հակառակ իրենց իրապաշարիկ, մերկ ձևերուն և կերպերուն, մարմնի ցանկական հեռութիւններէն վեր ըմբռնումներ են, բուն բանաստեղծութիւնն է, որ մարտը է ըստ ինքեան, և միտքու ու ջիւղբու ժամանակաւոր ու վազանցիկ խոսցանքէն չէ՛ որ կը բխի Կանիսեցինք արգէն զիտիլ տալ թէ երգ երգել է որ այդ համարմոկ և իրապաշարիկ հանգամանքը կուտայ իր արուեստին: Թղիւրանցիին մարմնի հասոյքները երգող մը նկատել, միտքուած շուայտութիւններու մէջ, ասիկա պարզ հակասութիւն մը

(*) Պէտ է մասնաւոր ուսագործիւն ընել այս կէտին որ Թղիւրանցիին ո՛չ միայն ասպէ կը գրէ, այլ նաեւ կ'երգ զանոն. այսինքն իր ասպետն եղանակներն ալ կ'ասեղծէ ինքն: Բուն սաղասացները (աւազները) ասոն էին եւ ասոնք են, թէ՛ երգալի եւ թէ՛ երգանան միանգամայն:

պիտի ըլլայ: Վասնզի մարմնի հեշտանքներուն մէջ խորատուզած մէկը չի կրնար ունենալ բանաստեղծական այն թախչը, զոր ունի Քիլուրանցին: Հանոյքներու մատնուած մէկը ասոնցմով իսկ կը գոհանայ, և չի կրնար այլևս բանաստեղծել, երգել, ասոնք կը գինոյցնեն ու կը բռնթացնեն զայն: Արուեստին մաքրութիւնը և բարձրութիւնը, երևակայութիւնը, — բանաստեղծական արտայայտութեան այդ ազդեցութիւնը —, զգացումներուն կրակը, լիզուէին շնորհը, բուն բանաստեղծութենէն հասարայթող մագնիսուսը, մէկ խօսքով, բանաստեղծութեան բոլոր յատկութիւնները կը թուլան, կը լուծուին, կը մարին և կը կորսուին յաւեւ՝ մարմնի ցանկութիւններուն և հեշտութիւններուն մէջ: Իսկապէս բնախօսական այս իրողութիւնը միայն բաւական է Քիլուրանցիի արուեստին տեսող հմայքը բացատրելու համար:

Մարդասպանութեան հաւատար սճիբ մըն է Քիլուրանցին զատել իբրև հանոյքներու գերի, շարաճնի կեղծարար մը:

Չնչ որ ուղեր կրկնել տարբեր ձևերով ինչ որ բարեք ու չեղանցներ նախորդ հատուածին մէջ Քիլուրանցիին անձը և արուեստը պաշտպանելու համար, զինքն չհասկըցող յարուան և բոլորովին անիրան ու անարգար քննադատներուն բարանքներուն զէմ:

Տեսնենք հիմայ բանաստեղծ Քիլուրանցիի գործին ու արուեստին շուրջ յայտնուած կարծիքները:

Չաճեան, Մկրտիչ Նազաչի և բժշկապետ Ամիրատլլաթի վրայ գրելէ ետքը, կ'ըսէ. — «Յայն աւուրս էր և Յովհաննէս Վրդ. Քուլիւրանցի, որ եղև կաթողիկոս Սոսյ ի թուին Հայոց ԶԼԷ. (=1489). սա արար գիրս ստանաւորաց բազմաունեան՝ միջակ եւ ստորի՝ սնով՝ իբր մեկնութիւն գրուեալ մննողոց, բազմալ ի բանից մեծին Վարդանայ Վարդապետի» (Պսմ. Հայոց Գ. էջ 508): «Մէջակ և ստորին սճը՝ գրարարի նայելով որսահում մըն է. մասն զի Քիլուրանցիին հայերէնը մտղովորդին միաքը ու զգացումները արտայայտելու կարող աշխարհարարացած հայերէն մըն է:

Ալիշան. — Այլ ամէնէն աւելի բանաստեղծ և տարբիրտ Յովհաննէս Քիլուրանցի, որ ասուն մը սիրոյ և զօրասանայ երգեր երգած է, ասուն մ'այլ Սոսյ կաթողիկոս է եղած» (Յուսիկի Բ. էջ 125. Հմտ. Զ. Գ. Զարհանէլեան Պսմ. Հայ. Գար. Բ. Նոր Մտղ. Բ. տպ. 1905. էջ 218-219, 222):

Գալն Լիպարիտի մասին գրուած տաղին (Հոգւովդ սուրբ ես և անրիմ) վրայ խտելու ասուն (Սոսյ էջ 510), կ'ըսէ. — «Երգոյս հեղինակն աշխոյժ երգիչն Յովհաննէս Քիլուրանցի, որ և Սոսյ կաթողիկոս եղաւ փե գարուն վերջերը (1489-1525):

Հ. Ղ. Յովհաննէս. — «Երկու ժամանակակից քերթողներն» (=Մկրտիչ Նազաչ և Կրիգոր Աղթամարցի) նախատառուութիւնն ընդհանրապէս կը արու Սոսյ կաթողիկոսին (1489-1525), թէ՛ աւելի բանաստեղծական աշխոյժ և թէ՛ աւելի առատարութի գրիչ ունենալուն համար: Իւր պահուած տաղերուն թիւն քանք կ'անցնի. չի կր-

նար ուրացուել նաև աշխոյժն ու վառվառն ունի: — Բայց կարծենք թէ ասանց իր բանաստեղծական աշխուժին ֆուս հասցընելու՝ աւելի պատու և կը բերէր վարած կեղեցիական բարձր պաշտօնին, եթէ չիբն ինչ աւելի չափաւորէր իւր երևակայութեան սյացըն: —

Գրութեանս հին սկզբնական խմբագրութեան մէջ այսչափ համառօտ ակնարկութիւն ըրած էինք քերթուածոց միոյ մասին նիւթոյն և մասնաւոր չափազանց կենդանի նկարագրութեանց վրայ: Իսկ այժմ ապագրութեան համար նոյն սկզբնական խմբագրութիւնն աչքէ անցընելու ժամանակ՝ ուղեցինք յաւելուլ յաշորդ տղերքն, ասունկով այն քննադատական Հատածն՝ ուր գրուած է Յովհաննէս Քիլուրանցիին եւ իւր սաղերը վերնագրեալ տետրակին հրատարակութեան առթիւ:

«Այս երգիչն (Յովհ. Քուլիւ.) կ'ըսէ հատուածագրին, . . . մեր ոսովարան երգչաց նշանաւորներէն է, որուն երգերը շատտեղ արդեամբք ըտափ են թէ՛ ըստ կարգութեան ստանաւորի և թէ՛ ըստ բանաստեղծական զեղեցիութեան: Քուլիւրանցուց երգերը բաւական յուսախ կը գտնուին ձեռագրաց մէջ. . . իւր կենաց այլևս այլ պարագաները զեռ շատ մթին են, և Հրատարակիչն (Մեծ. Գր. Կ. Կոստանեանց) Քուլիւրանցուց վրայ գրած Յոսաշարանութեան մէջ (էջ 1-21) շատ շին բան կըցած է որոշ մեր առջև զնել սոյն երգչին կենաց նկատմամբ: Աւելի մանրամասն ներկայացուած է այս Յոսաշարանութեան մէջ Քուլիւրանցուց երգերու նկարագրիքը, զորոնք Հրատարակիչն երկու խմբի կը բաժնէ, մին՝ Քուլիւրանցուց զեռ աշխարհական նշանաւոր միջոցին, և որ մեծաւ մասամբ սիրոյ երգեր են, և միւսն կաթողիկոսութեան ասուն բարեմանները՝ որոնք ընդհանրապէս խրատական են: Սակայն այսպիսի բաժանում մը չընդհանում միայն ինչ է. . . » (Հ. Յ. Վ. Տաւալ, Հանգու Ամստրայ, 1893, էջ 270. — Ազգ. Մտղ. Կն. Միլիտարեան Ազգ. Տղչի. էջ 27-29):

Ա. Զօգանեան: — «Փոքոյրդական կամ աշուղական բանաստեղծութեան ամէնէն զեղեցիկ ու կատարեալ էջերը անոնք են զոր արտագրած են Փոքոյրդական կեանքէն, լիզուէն ու հաշակէն ներշնչուող, բայց և նոյն ասուն իրենց քերթուական բնագոյնն որոշ չափով գրական հմտութիւն ու հաշակ մտայնութիւնը աշուղէս եղած են Սայաթ-Նոյա, Նազաչ Յովնաթան, Դունկիւնոս, Քուլիւ, — ինչպէս և աշուղի պէս գրող այն ու-աշուղ զմայլելի գրադէաները, Աղթամարցի, Քուլիւրանցի, Կոստանցիին Երզնկացի, Երեմիա Թեօփրեսեան, են. . . (Հայ էջեր, Ժէ):

Գարձալ. «ԺԶ. տաղը՝ Յովհաննէս Քուլիւրանցուց մէկ փոքրիկ սիրերգն է, այդ զմայլելի երգչին ամէնէն նուրբ էջերէն մին, ուր իւրաքանչիւր տաղ թարմ ու լուսերանց է զարմանազդի պէս: Տաղաշարութիւնը՝ 4-4-4 Այս տաղիկը. — ինչպէս և վերև յիշուած այլուրեւական տաղաշարութեամբ սիրերգը, — կը պահուի Կոստանեանի հրատարակութեան մէջ, որուն ամ-

ժամուսնու կտրուկները հետո են արդէն թուրքա-
 րանցւոյ ամբողջ գործը ներկայացնելի և ուրիշ
 ժամանակներու հետ բազմապատկուած իրենց սր-
 խայններէն ու աղաւաղումներէն մաքրուելու
 պէտք ունին: Գ. կոստանեան մեծ արժանիքն
 ունեցեր է առաջին անգամ հասարակ մէջ անխո-
 լիելու թուրքաւանցւոյ երգերուն մէջ մասը,
 ինչպէս և Գրիգոր Աղթամարցւոյ, Մկրտիչ Կա-
 ղաշի և այլ միջնադարեան բանաստեղծներու
 նախնորդներու գործերը^(*). բայց անհրաժեշտ է
 որ այժմ ուրիշներ, կամ ինքն իսկ, երկրորդ, ա-
 լելի ամբողջական և աւելի խնամակալ և ուղիղ
 հրատարակութեամբ մը՝ տան մեզի թուրքաւան-
 ցւոյ գործը, ինչպէս և միւս բանաստեղծներու-
 ներս (Անդ. ժԹ—Ի):

Գարնակ. ԻՆ. և Զ. տաղերուն վրայ խօսե-
 լով կ'ըսէ. — ԲՅէ ս'ը գարուն են գրուած, թէ
 ս'ի են միտն հեղինակ Յովհաննէսն ու միւսին
 յարմարի Գերբըն, չեմ գիտեր. եթէ ազգացուց-
 ուի որ սիրերգին հեղինակը Յովհաննէս թուր-
 կաւանցին է, այդ արդէն իսկ զմայման ար-
 ժանի քերթողը աւելի ևս պիտի սեմնայ մեր
 աշխին, — որովհետեւ այս կտորը աւելի խոր է և
 ուժեղ քան թուրքաւանցիի միւս մեզի ծանօթ
 սիրերգները. (Անդ. 1Զ.):

— Այս հեղինակէն ունինք շատ մը տաղեր,
 (ինչպէս իր կրօնական, իրատական, սրբախո-
 սական և պատմական երգերը) որոնք մտայն օրե-
 րու հայրենասէր եկեղեցականի մը գործերն են.
 սոմանք ալ սիրոյ երգեր, թեթև ու շտրտալի
 գարնուածով մը և նամարմակ զգայնասութեամբ.
 ոնք նոյն երկուքին մէջ ալ կուտ, պոչմառ և
 բարբոտին մտղոյրդական երանգով ո՛ն մը:

Սիրոյ երգերը, որ բանաստեղծին երիտա-
 սարգութեան գործերն են, բազմաթիւ են. թէ և
 այս բոլոր սիրերգներ կը վերջանան մեղադրան-
 քով մը, զոր եկեղեցականութեան ստեղծուած
 հեղինակը կ'ուզէ իր անմին, բայց առո՛նք են որ
 կը կազմեն հայ քնարերգութեան ամենէն ան-
 կեղծ ու ամենէն մարմատիրական էջերը:

Եւ սակայն կրօնական ոգիի զուրկ չէ թըլ-
 կաւանցին. ան խորապէս կ'արտայայտէ զայն
 իր իրատական, սրբախոսական տաղերուն, ինչ-
 պէս նաև մահուան և կեանքի ունայնութեանց
 երգերուն մէջ. բայց այս կրօնականութիւնը ա-
 մենեւին չ'երևի իր սիրերգներուն մէջ, որոնք,
 առանց միտաբանականութեան, ազգականներն են
 զեկեղեցիի մեկուս սիրահար սրտի մը, որ կ'ախոր-
 ժի կոտ յանդ շնորհը մեծացուցանելէ (La Ro-
 sseraie d'Arménie, Tome Second, Paris, 1923, p.
 154):

Այս զնահասութեան թուրքաւանցիի բանաս-
 տեղծութեան մասին ճիշդ են բնդհանուր առ-
 մամբ: Մենք համաձայն ենք Տաշեանին, որ կոս-
 տանեանցի — պէտք է աւելցնել նաև այժմ Զո-
 պանեանի — ենթագրած երկու խումբերու բա-

ժանուսն իրապէս չ'ընդունիր, իրրև թէ թուր-
 քաւանցին իր երիտասարդութեան գրած ըլլալ իր
 սիրոյ տաղերը, իսկ հոգեւորական ըլլալէ ետ-
 քէ գրած ըլլալ իր իրատական տաղերը: Ընդ-
 հակառակը սիրոյ տաղերուն մէջ այնպիսի նշան-
 ներ կան, որ ցոյց կուտան թէ գրողը կրօնաւոր
 թուրքաւանցին է:

Իր տաղերը, ինչպէս կ'երևի շատ շուտ ժո-
 զովրդականացած ու սարսափած են. և ասոր
 ազգացոյցը ա՛յն է որ աստուցմէ տասներկու հա-
 տը, հրատարակուած են 1512|3ին, Վենետիկ, Թըլ-
 կաւանցիին տղջութեան ա՛յն ևեւաքածոյին
 մէջ որ կը կրէ Տաղարուն է այլ նոյն և մտնող,
 Կաղաչի տաղերուն և Շնորհալիի Հանելուկներուն,
 և այլնի նմա:

Այսինքն՝ թուրքաւանցին այն բախտաւոր բա-
 նաստեղծը եղած է հայ մտղոյրդին մէջ, որ ժԶ.
 գարուն սկիզբը, իր կաթողիկոսական աթոռին
 վրայ իսկ աչքերով տեսած է իր տաղերէն 15 հա-
 տին հրատարակութիւնը, և առիկա մէկն է հա-
 յերէն ազգագրութեան ամենէն հին և թանկագին
 երախտայրքներէն^(*):

Դժբախտաբար շատ խանգարումներու և ա-
 զաւաղումներու ենթարկուած են թուրքաւանցիին
 տաղերը, քնարիխանդներու կողմէն, և ինչպէս
 որ Զօպանեան մասնանիշ ըրած է, խնամակալ նոր
 հրատարակութիւն մը անհրաժեշտ է բանաս-
 տեղծ-կաթողիկոսի տաղերուն ամբողջը լոյս րե-
 րելու համար: Թէև Այիշան իր Յօշիկին և Սյու-
 սանին մէջ, Յոֆանեան իր միջնադարեան Տաղա-
 շարութեան մէջ, Սրուանմտանց իր Մանանային
 մէջ (1876), Տէփլանց իր Հայեղին մէջ (1882),
 կոստանեանց իր Յովհաննէս թուրքաւանցի եւ իւր Տա-
 ղերը հաւաքածուին մէջ (1892), Զօպանեան իր Հայ
 էջերուն մէջ (1892), Սուրբաթեան իր Գրական Դու-
 ճաններուն մէջ (1922) այնչափ նպաստակներով ու
 առիթներով բաւական կտորներ հրատարակած
 են, բայց լման գործ մը չեն կազմեր ստանք:

Այս գլուխին վերջը կը զնենք թուրքաւանցիի
 լոյս տեսած ու անտիպ տաղերուն մէկ ցանկը,
 և նոյնը մըն ալ կուտանք անոնց ընտիրներէն.
 որովհետեւ ստանք են որ կ'ապրին իր գրական
 գործերէն, և ստանցմով է որ ինքն ալ հուշա-
 կաւոր եղած է միջնադարեան աշխարհաբար գը-
 րողներու շարքին, տալով մտղոյրդի խօսած
 լեզուին անակունտնէն զարմուած մը, սիրուն նա-

(*) Այս Տաղարունը, ինչպէս նաև Պարզա-
 սումարը, Ապարտէ ետային, նոյնպէս Պատարագա-
 մասոյց մը սպաղարուած են Վեներիկ միեւնոյն սպա-
 րանի մէջ, 1512-13:4: Այս վերջինի յիշատակարանն է.
 [Տղա] «Գրեցաւ սուր տառ ի. Զ. ԿԲ. ի սասնա-
 ւապան խոզան ի Վեներիկ ուր է Վեներիկ ճառնխոսան.
 ձեռամբ մեղապարտ Յակոբին. ով որ կաղապի մե-
 ղաց թողութիւն խնդրէի Աստուծոյ:» ԶԿԶ—1513 կամ
 1514: որովհետեւ հայ բուսականի սկիզբը կը գնեն 551
 կամ 552: ՌԺ—1561] ու «Տաղարան»ի մը մէջ որ-
 վագրուած է թուրքաւանցիին մէկ սաղը (Արեկ, արեկ
 իմ խոսք սուրբ) ձեռամբ Գարնանիս» (Հ. Ամսոր-
 կայ, 1888, էջ 140-141):

(*) Պիտի տեսնենք ի՞նչ էտր թէ կոստանեանն աս
 յառաջ թուրքաւանցիին Տաղերը հրատարակուած են ան-
 գամ մը, 1512]ն:

բաժնեկներով, բաւերու հագուեցնելով իր բանաստեղծութեան ամենէն զեղեցիկ պատմականներն և զնկերով ատանց ամէն մէկուն մէջ կայծ մը, թըթխ մը, հմայքոտ երանց մը, զբաւել առում մը, թափանցիկ իմաստ մը: Այնպէս որ Թլկուբանցիին հայերէնը իր սագերուն ամենէն սուշագրու կողմն է, որ զարմանալի կերպով պահած է իր թարմութիւնը, իր յանդգնութիւնը, իր միամտութիւնը, իր մարմնաւորած յղացումներով և զարգափարներով և իր զեղեցիկ արտայայտութեամբ:

ԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆՆԸ

Կանխեցինք զիտել տալ որ Թլկուբանցիին իբրև Տաղասաց-բանաստեղծ հռչակուած է աւելի քան թէ կաթողիկոս. այնպէս որ իր կաթողիկոսական գործունէութեան մասին պատմական տեղեկութիւններ չեն հասած մեզ: Արիկա սահայն չի նշանակեր թէ Թլկուբանցիին անգործ ու աննշան ժամանակ անցուցած ըլլայ կաթողիկոսական աթոռի վրայ: Ընդհակառակն իրողութիւնը այն է որ Արիկիկոյ կաթողիկոսներէն և ոչ մէկուն պատմութիւնը ունինք, պատմութիւն բուսին իրական իմաստով: Առ հասարակ Ձեռագրաց յիշատակարաններն ու շարք մը վաւերագրերն են որ քիչ մը լայն կը սփռեն անոնց կենսաքին պատմական մթութիւններուն վրայ:

Իրաւամբ կ'աղասէինք որ գոնէ ինքն Թուղկուբանցիին, իր սագերէն մէկուն կամ միւսին մէջ, անկարգութիւն մը բրած ըլլար իր կաթողիկոսական պաշտօնին կամ իբրև հոգեորական, իր եկեղեցական գործունէութեան մէջ կողմին: Բայց, ինչպէս որ տեսնւի վերադոյն, երկու անկարգութիւններ միայն բրած է իր կենսաքին նկատմամբ իր տաղերուն մէջ, նախ թէ ինքն ճորան ու ծառան է Ս. Կարաղետին և յետոյ թէ ինքն 70 տարեկան է Վ՛ ման, Կանի՛ զեղ յիւսնա տաղը գրելու առնել:

Թրմանեան, հիմնուելով Թլկուբանցիի մասին պատմական տեղեկութիւններու չզոյւթեան վերայ, կ'ըսէ: Վեր կաթողիկոսական գործունէութենէն շատ քան չենք գիտեր, և կը հետեցնենք թէ շատ քան ալ բրած չէ, թէ պէտե մինչև 1525, ամբողջ 36 տարի կաթողիկոսութիւն վարած է: Եւ, Թլկուբանցիին բանաստեղծական արուեստը գնահատելէ ետքը, զարմանալի հակասութեամբ մը կը շարունակէ ըսել. «Եւ իրեն քնական աշխուժութեամբը կեկեցեցականութեան մէջ ալ աշխատասէր և զբաւել զգործունէութիւն ցուցնելով, հետզհետէ բարձրացած և մինչև կաթողիկոսութիւն հասած կ'երևին Այլ թէ Կրիկիկոյ աթոռը ի՛նչ օգուտ քաղեց առաջ կաթողիկոսէն, կամ թէ Թլկուբանցիին ի՛նչ արգիւնքներ ընծեոց շայ եկեղեցոյն, ինչպէս ըսինք, մեզի անձանսթ կը մնան, և չզոյւթեան կասկածներ կը թելադրեն» (Ազգայն. 221C-11):

Եթէ Թլկուբանցիին իր կաթողիկոսութենէն յառաջ, իր քնական աշխուժութեամբը կեկեցեցականութեան մէջ աշխատասէր եղած և զբաւ-

ել զգործունէութիւն ցուցնելով բարձրացած է մինչև կաթողիկոսութիւն, այդպիսի բնութեանէ կտքը, պէտք էր ատանց վարանելու հետեցընել թէ Թլկուբանցիին իր աշխուժութիւնն ու գործունէութիւնը պահած է իր կաթողիկոսութեան մէջ ալ, եթէ իր եթանասուն տարիքին մէջ զին կ'տեղծարարներ, կրնանք ըսել նաև թէ կը գործէր աշխուժ ձեռներին, ոգևորուած կեանքին փորձառութիւններով: Իբրև փրկիսփայ-բանաստեղծ: Վանն զի շատ գործ կար ընելիք: Իր մասնակը խաղաղ չէին Կրիկիկո, Հայաստան, Պաղեստին: Անիշխանութիւններու և կամ քաղաքականութիւններու արհաւիրքին տակ հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը կը հարստահարուէր: Կաթողիկոս մը չէր կրնար անգործ կենալ: Երուսաղէմ միայն բաւական էր զինքն զբաղեցնել և գործունենայ գիճակի մը մէջ պահելու համար: Եւ ձեռագրական այն քանի մը յիշատակարաններ, զորս կըցած եմ ձեռք բերել, իրենց համետ արտայայտութիւններով շատ քան կը սորվեցնեն մեզի Թլկուբանցիի հայրապետական գործունէութեան մասին հանդէպ երուսաղէմի:

Ա.— Ստանօղի (Անկիւբիկոյ մտքի) Ս. Քառասնից կեկեցեցոյ Թիւ 2 Ձեռագիր Աւետարանէն: Դժբախտաբար շատ խակ և զէշ զըշութիւն մը, զժուարընթեոյցի(?) :

— Կարձեայ ևս նուազան Մկերիլ Վարդապետ եղի զԱւետարանս յիշատակի Սուրբ Երուսաղէմ, ի թուակն ՋԻՁ (= 1507). ի սոյն ժամանակի Տե. Յոնաննէս Կարողիկոս երուսաղէմի ևս սու(?) էկն առ մեզ այն(?) անիրաւ բաներ որ անհաւատ զժրժուք եղան, և իւր պս.(?) ի՛նչ յերկարեմ մինչև զգրկալսք ծածկոցն ի մեզ եկաւ(?) ԽԵ (= 451) չուրջառ Նոզեուր Տէրն թափելու(?) յայնմ ինչուսն(?) էր թէ զամէն թափէք. մեք այլ զօր ի յիշատակ(?) Քուրվանիսն եւ Տուրիսին, Վարդեղասիսն հոտոք յիշատակի Սուրբ յերուսաղէմ. մի՛ ոք իշխեսցէ հանկի զոս անտի ո՛չ ի մերոց և ո՛չ յտարար, ու ու՛ որ յանդնի, զրկի ի փառաց որդւոյն (էջ 475 ր):

— Կարձեայ ծանկո՛ւնք կեկեցեցոյ որ զայս սուրբ Աւետարանս ի սուր Քառասնից դրամնէ (այոնքն՝ Ստանօղի Ս. Քառասնից կեկեցիկէն) հանէ ծախելով կամ զբաւական զնկերով, ինքն անիծեալ և որոշեալ ինի ի եւթն խորհուրդ կեկեցեցուն:— Գրեցաւ սոյ ի թվաւ: Հայոց ՉԿԵ (= 1516) ի յաւաքնորդութն Հայոց Տեառն Տէր Յոնաննէս Կարողիկոսիմ, եւ էպիսկոպոսութիւն Յոնկուրիս Տէր զԱեփաննօսիմ, եւ ի բազաւորութն Սուրբան Մէլիմ Ծան փարիսանիմ. զոր Տէր Աստուած վայելել սուցէ զիւր թագաւորութիւն. ամէն եւ զգրուլ յիշատակարանին զԱստուածատուր մեղաւորս յիշեցէք ի Քրիստոս միով Տէր ողորմիւ և Աստուած զնկզ յիշէ իւր երկնից սուրբ արքայութիւն. ամէն» (էջ 615):

(*) Այս յիշատակարաններ նոյնքամբ յառաջ բերուած են իրենց սխալներով եւ քերի ուղղագրութեամբ նամակայն քնալիքներուն:

Բ.— Լալէպի Ս. Քառասնից եկեղեցւոյ Չեռ, Գանձարանք, թիւ 71, գրուած 292—1497ին սի գառն և անբարի ժամանակիս, Տէր Աւագ քահա նայի համար, Արարատցի վերմանէս արքայոյ ձեռքով, որ կրթէ իր յիշատակարանին մէջ.

— Եւ արդ զրեցաւ սա ի քաղաքս Սուրբ Երուսաղէմս, ընդ հոգմանեաւ Ս. Յակոբիս և այլ Սուրբ սնտարինականաց Գրիստոսի, Յամբ նայրայետրեան Լայոց Ոնանտ Կարողիսիս, և եպիս կոպատրեան Տէր Մարտիրոսի, և բաշխութեան Յովանէսի կուզ կոչեցեալ, և Կուզսիմիոն, որ Սուրբ Յակոբայ գրուիս նորայեցին, և զՊնունցն շինեցին, ճառք Երեսնէից. և փակակալ Սուրբ Յովորայ Տէր Կարաղեթին. և սուլթանութիւն Մարայ ոչ որ կայր, զի մեծ սուլթանն սաստիկ էր, և որդի նորս ոչ կարէր թագաւորել. զի ասէին թէ չէ արժան. այլ Աստուած իր բարին կատարէ. ամէն:

Արդ՝ որք հանդիպէր սմա, տեսութեամբ և կամ ազատութեամբ ինչ իւր, և ի պատկանաւոր խնդրուածս, զՏէր Աւագ և... յիշեցէք և Աստուած սղորմի սասցէք. ամէն:

Գարձեալ աղաչեմ յիշել ի Տէր Ղևարիմ մարտապետ մեր և որ սպասաւորէր մեզ կերուած (= Կերակրուած) և որ զմէնն ասէ, Աստուած սղորմի նորս. ամէն:

Գ.— Լալէպի Ս. Քառասնից եկեղեցւոյ թիւ 4 Չեռ. Աւետարանի յիշատակարանք.

— ՔՊՊՊ... Արդ շինեցաւ մաշգոյս սորս, զրեցաւ և մարկեցաւ սաստաւարուղիս սուրբ աւետարանս Գրիստոսի, ձեռածր բազմամեզ և փրցուն անխնաստ և անարժան և մեղապարս զչի ներսնի սաս, անուն երէց ի թմարանիս Կայոց 29 (= 1511), ի գառսս կեսարիայ Կապադովկացոց, ի զեազս որ կոչի Սպիլեա, ընդ նովանեա սուր Աստուածամովսն և սուր Քէղտրոսի զհմարնիս: Ա՛րդ աղաչեմ զամենեան որք հանդիպէք սմայ տեսնելով կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զմեղապարս զչիս զներսն և զտասցոյս սորս զՅովաննէս կարողիկոսն և զուսիցիսն իմ զՅովաննէս Կապառն և զնայրն իմ և զնայրն իմ զՅովաննէս Կանանտ և զնայրն իմ զՅովարն և զեղբայրսն իմ զԱստուածաւոր եպիսկոպոսն և զՊարտան և զնայրայեան և զղեւարոյս սղիկս իմ և զամենայն արեան մերձաւորքս իմ զհեղանինս և զհանգուցեալսն:

Գարձեալ յիշեալք ի Քրիստոս զզոզս զներսն և զսացոյս զՅովաննէս կարողիկոս որ սացո գա ի նոյալ արդեանց իւրեանց յեասակ անօնիկի և եղ յեասակ անօնիկ իւրոյ և ձեռագոց իւրոյ. զոր Աստուած փայլուածն սացէ նմա ընդ երկայն անուրս. Ամէն:—

Արդ աղաչեմ զձեզ ով սուրբք հայրք և եղբարք որ խնամով պահէք զսուրբ աւետարանս Գրիստոսի ի մամ, ի ձիթի և յամենայն Քասա, և պահէք ի յեկեղեցի և կարգիս և յիշէք և յիշատակ առնէք զձոզաց և սասցոյցս և ամենայն մերձաւորաց մերոց, սղորմի ստելով կամ Լայր մեր յերկինս. նայնպէս և ձեզ պարգևեցէ զերկնից արքայութիւն ի Քրիստոս, և Քրիստոսի փառք յաւիտեանս Ամէն:

Ե.— Ի թմարան Լայոց 226 (= 1525) [6], աւետարան գրուական էր ըն (= 15) Ֆրոյս վերայ: Ես նովանէս կարողիկոս ասի և Կապեցի՝ և եղ յիւսակ ինն և ձեռագոց իմոց նոզոյն, ի Կապան Լայոյալ ի դուռն սուրբ Աստուածամովսն (քերուած) և սուրբ Քառասնիցն: Ո՛վ որ հանէ կամ գրուակ կամ ձեռակէ, զՅուդայի և զԿայիկի և զխաշահանոցացն զման ընկալցի, և խնամով պահուալքն արհնին ի յԱստուածոյ և յամենայն սրբոց և ի մէնջ. ամէն:

Գարձեալ յիշեալք ի սուրբ աղաչեմ ձեռ գտակնոց Կաղեթոս զնայասուր եպիսկոպոսն և մի Տէր սղորմայի արժանի արարէք և Աստուած զձեզ յիշէ ի յիւր արքայութեանն. ամէն:

Գ.— Ս. Յակոբայ զանձատան մէջ կեսն Քուզուկի տիրոջսով ձեռով Չեռագիր աւետարանք, մազապի, արձաթագոս, գրուած 294—1272ին, ազատագրուած է Քիլիւրանցիի ձեռքով: Հետեւեալ յիշատակարանք գրուած է նոյն ինքն Քիլիւրանցիի գրչով:

— 2 վերջին սասցուց սուրբ օսկեզաս աւետարանիս զՏէր Յանննէս կարողիկոս Քուլիւրնցին աղաչեմ յիշել ի սուրբ յազաւեմ ձեռ. որ սասցաւ զսայ յիշատակ իւր ի հայալ արդեանց իւրոյ: Եւ ես զսայ յիշատակ անջինջ որ կենայ ի սուրբ Յակոբս սեփական: Արդ մի՛ որ իշխեսցէ հանել զսայ ի Սուրբ Յակոբայ կամ զոգանալով կամ ձեռակելով կամ գրաւ զնելով: Եւ որ յանդին և հանէ նայ զպատիժն Կայիկի, և խնամով պահուղն արհնի յԱստուածոյ և ի Սուրբ Յակոբայ. և որ սրտի մտաւք զձեզ յիշէ՛ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուածոյ մերոյ, ամէն: Արդ զնեցի զսուրբ Աւետարանս ի թմարան Լայոց 226 (= 1523), և եղի յիշատակ ինն ի Սուրբ Յակոբս. արդ ով որ հանդիպիք սմայ կարգաւով և տեսանելով կամ գազափար առնելով, ի իրանով Աստուած ողորմի սասցէք Յովաննէս կարողիկոսին, և Աստուած ձեզ սղորմեցի յանդ ասնինն, ամէն. և զիցի, եղիցի:

Այս յիշատակարանները Լալէպի և Երուսաղէմի վերաբերեալ Չեռագիրներու կը պատկանին, և այս իրողութիւնը իրաւունք կուտայ մեզի ենթադրել թէ Սիս շատ ազատով չէր Քիլիւրանցիի կաթողիկոսութեան ատեն, այնպէս որ բանտատեղծ կաթողիկոսը աւելի Լալէպ կը նստէր քան Սիս, և մտնէ կ'գրադէր Երուսաղէմի գործերով և սակայ անձամբ կուգար Ս. Քաղաքը ուղղակի տեղայն վրայ ալ աշխատելու: Եւ նոյն իսկ կենսած Քաղաչիկ Աւետարանին յիշատակարանին վրայ հիմնուելով կրնանք բնիլ թէ Քիլիւրանցին իր փախնաւորութենէ երկու տարի յառաջ Երուսաղէմ կը գտնուէր և հո՛ս իր իսկ ձեռքով յիշատակ գրաւ այդ Աւետարանը ի Սուրբ Յակոբս:

Այդ յիշատակարաններ նաև ջրոյց կուտան թէ Քիլիւրանցին իրրե կաթողիկոս կիլիկոյ, ակնն է նաև Երուսաղէմի աթոռին Տեառնք թէ վերն յառաջ ընտրուած է. Քիլիւրանցին մէջ նոյն իսկ Կարողիկոս Կուսաղէմի կուտուած է Քիլիւրանցին: Մենք տեսնք նաև թէ Մու-

սարէկեան եւ Եղզօկացի Կարապետ կաթողիկոսներ ալ հ'ըրազէին Երուսաղէմի աթոռին գործերով, և զեւ պիտի տեսնենք թէ Կիլիկիոյ կաթողիկոսներ ինչպիսի ծառայութիւններ մատուցած են Սրբոց Յակօրեանց աթոռին:

Մեր յառաջ բերած յիշատակարանները ցոյց կուտան որ Թուրքուստանցի Ս. Յակօրի կողմատուած (անշուշտ պարտատէրներու և հարստահարիչներու կողմէն) և ի վաճառ հանուած սրբութիւնները ազատագրած և վերադարձուցած է զանանք իրենց տեղը. մասնաւոր ուշադրութեան արժանի են իր ազատագրած 2 եռագիր աւետարանները:

Ասեք ապացոյցներ են Թլիզուրանցիին գործունէութեան նոյն իսկ իր յառաջացած տարիքին մէջ, որ ամէն կողմ կը վազէ իր պաշտօնին բերմունքով և զորմ կը տեսնէ:

Ս. Յակօրի պատմագիր Աստուածատուր Եղս. Տէր-Յովհաննէսեանց, իր գործին մէջ (Փմպրկն. Պատմ. Ս. Երզնի. տպ. 1890. հատոր Ա. էջ 251-254) տուած է արարեբէն գատալճաի մը (Հէօճէէթ) Թարգմանութիւնը, որուն համեմատ Յովհաննէս Եղս. որդի Ղուկասու, իբրև տէրը Երուսաղէմի աթոռին, հարևոր գործ մը կարգադրէ: Աստուածատուր Եղս. այս ճեմաննէս Եղս. որդի Ղուկասունչ կ'ուզէ նոյնացնել Թլիզուրանցիին հետ (սթերև ս իցէ Թուրքուստանցիին), առանց վկայութեան կանչելու այն խաշարը, որուն յիշատակագրութիւնը զբինք վերև, որ ստուգիւ կը հաստատէ թէ Թլիզուրանցիին հօր անունն է Ղուկաս. ցոյց թէ իրօք խաշարին մէջ յիշատակուած Յովհաննէս կիղզ. և Աստուածատուր Եղսի. Թարգմանած արարեբէն գատալճաին մէջ յիշատակուած Յովհաննէս որդի Ղուկասու միևնոյն անձն'ըն են: Օրմանեան շնորհունիր այս նոյնացումը միայն այն առարկութեամբ կը յիշատակուի, որ արարեբէն գատալճաին մէջ և առ առաւելն Կիլիկիոյ տեղի կողմ Յովհաննէս եպիսկոպոսի մը կրնանք պատշաճեցնել այդ ակնարկը» (Աղլպատ. էջ 2235): Եթէ Օրմանեան ծանօթ ըլլալ վերոյիշեալ խաշարի յիշատակագրութեան, շենք զիտեր թէ պիտի հաւանէ՞ր Աստուածատուր Եղսի. քերտօսին:

Ինչոքիւր քիչ մը աւելի մօտէն ուսումնասիրելով, Յովհաննէս կիղզի. և Յովհաննէս Եղսի. նոյնացումը անկար թուեցաւ մեզի երկու զրոքուարութիւններով: Առաջին, արարեբէն վճարգրին մէջ ճեմաննէս եպիսկոպոս որդի Ղուկասու է և ոչ թէ ճեմաննէս կարողիկոս որդի Ղուկասու: Կարելի չէ որ կարողիկոս եղող մը՝ գատարանի առջև ներկայանար իբրև եպիսկոպոս: Եթէ պահ մը կընթացրուի թէ քանի որ ճեմաննէս անունը նոյն է թէ՛ խաշարին և թէ՛ մրճագրին մէջ, և թէ երկուքին ալ հօր անունը է Ղուկաս է, ալ «կաթողիկոս» կամ «եպիսկոպոս» շատ տարբերութիւն չ'ընեն, այդչափ բարակը պիտի չ'իտակէին արար գատարանի մը մէջ, ստոր դէմ սակայն, երկրորդ զփուարութիւնը երևան կուգայ, այսինքն Թլիզուրանցիին վախճանած է 1525ին, մինչ վճարգրին մէջ ճեմաննէս որդի

Ղուկասու ոչ չ'էրեհի, և անմամբ յայտարարութիւններ կ'ընէ գատարանի առջև մինչև 1529ին և 1532ին:

Այս երկու զփուարութիւնները հարկելու համար միայն սա՛ ինքնագրութիւնը կարելի է ընել. քանի որ Թլիզուրանցիին յաջորդն ալ Յովհաննէս մըն է, ինչպէս պիտի տեսնենք, կրնանք ենթադրել որ Թլիզուրանցի Յովհաննէս, որդի Ղուկասու, զատը սկսաւ Երուսաղէմի գատարանին առջև, րայց ինչն մտաւ 1525ին, և իրեն յաջորդը, Քիլիսցի Յովհաննէս Գ. Կիղզ. շարունակեց սկսուած զատը, իր նախորդին անունով, և վերջուպէս շահեցաւ զայն: Օրմանեանի առաջարկած պատշաճեցումը պատմականապէս անհնարութիւն մը կը մտայ, ցո՛ւշափ չի բացատրուի թէ ո՛ր է Կիլիկիայէ եկող Յովհաննէս եպիսկոպոս մը, որ Երուսաղէմի աթոռին գործերուն կը խառնուի իբրև անոնց պատասխանատուն, և ինչպէս պիտի տեսնենք, փոխանցումներ կ'ընէ գատարանի առջև, իբրև տէրը Սուրբ Յակօրայ աթոռին Եթէ որ մը: շնորհիւ ուրիշ վաւերագրիներու, հաստատուի մեր ենթադրութիւնը, այն ատեն պիտի ապացուցուի ինքնին թէ Յովհաննէս Թլիզուրանցիին շատ մեծ ծառայութիւն մը ըրած է Ս. Յակօրայ աթոռին, ազատելով զայն աշխարհական վախճառուի մը և հարստահարիչի մը ճիրաններէն:

Ըստ Աստուածատուր Եղսի. պատմութեան գատարան ինկած ինչոքիւր հետեւեալ կերպով կը ծագի.

Թերայխոցի (Եղիպտոս) Գէորգ անուն մէկը, որ Երուսաղէմ կը բնակի, փոխանորդը կամ զորձակատարը կ'ըլլայ Ս. Յակօրին: Այս մարդը ծանր սովորներով շատ մը զրամներ փոխ կուտայ թէ՛ Ս. Յակօրի միարարաններուն և թէ՛ քաղաքացիներուն, կը յաջողի վանքին կառավարութիւնը ձեռք անցնել, տիրել վանքին կահկարարներուն, կալուածներուն, կկամուտներուն վրայ, և վարել վանքին արտաքին ու ներքին գործերը:

Երբ Յովհաննէս Երուսաղէմ կուգայ և կ'անցնի իշխանութեան զուրբ, միայրը կը զնէ վանքը ազատել Թերայխոցի ձեռքէն. վախճառուն կը կուտէ իր զլիտուն զայլքը և կ'սկսի աւելի ևս բռնանալ: Յովհաննէս կը համերբէ ատեն մըն ալ, միարանութիւնը կը համոզէ և կը շահի իր կողմը, և վերջուպէս Թերայխոցիին բոլոր պահանջները կը վճարէ և անոր ձեռքէն կ'ազատէ Ս. Յակօրին կահկարարներն ու սրբազան անօթները, և շոր արարախօս վարդապետներուն կրկնակցութեամբ գատարան կը տանի Թերայխոցի Գէորդը, որ կը յայտարարէ գատարանին առջև թէ իր բոլոր պահանջները ստացեր է և Ս. Յակօրին բոլոր ինչքերը վերադարձուցեր է Յովհաննէս եպիսկոպոսին, և այլևս սեէ աննիւթ չ'ունի: Դատարար զրի կ'առնէ Թերայխոցիին յայտարարութիւնները. կը վաւերացնէ և կը յանձնէ Յովհաննէս եպիսկոպոսին: Այս պատշաճագրին թուականն է 927 (=1517):

Յովհաննէս եպիսկոպոս վանքէն կ'արտաքսէ

Թերաշխոցին, բայց սա հանդուս չի կենար, և հակառակ իր խոստման ինչ ինչ անթններ վար զբաժնի ըլլալով՝ չ'ուզեր յանձնել զանոնք կը չառայ խոսովի միարանութիւնը: Եօթը տարի կը տեւէ այս խոսովայոյց վիճակը, և վերջնականապէս Յովհաննէս եպիսկոպոս այս անգամ խնդիրը կրկնա արարապէսներու, Մկրտիչ եպիսկոպոսին և Մանուսրին, որոնք զատի կը քաշեն Թերաշխոցին երկրորդ անգամ և կը պարտաւարեցնեն զայն և հ'առնեն ինչ որ մնացած էր վաշխոսութիւն ըստ: զատարանը նոր վճարքով մը կը հաստատէ զատարարութեան արդիւնք ՁԿՎ (= 1524) ինչ:

Իսլաւատը եղաւ որդի Աղստալտի (= Առատաւատաւ) կը թուի թէ երեսուցէնացի է ընդի, իսկ Մանուսր, որդի Ղաննէմի, ըստ Առատաւատաւ եպիսկոպոսի թարգմանը կամ զբաժակատարն է Լատինաց վանքին, որոնք զանաւ ըստած և թեթիկէմի անունով ախտաւորներէն զանձուած տարբի խնդիրն ալ հարգապէս կու տան. այսինքն զատարանով որչա՛նց կու տան թէ իւրաքանչիւր ուխտաւորէն բերական եղաւ անձար զբաժ միայն պիտի առնուի և աւելին պահանջելով պիտի չնեղեն ուխտաւորները:

Յովհաննէս եպոս. տանն, Իսլաւատը եղաւ և Մանուսր 5000 զանեկան ծախանով նորոցել և անբացնել կու տան ձիւթնեաց յիւրան վրայ համարածման ուսմանողոյն եկեղեցոյն խախտու զըմբէթը ՁԿԶ (= 1529):

Իսկ Յովհաննէս եպոս իր պատգիարքական իրաւունքներն ու իշխանութիւնը իր իսկ յոժար կամքով կը փոխանցէ Մէլքոնցի Առատաւատաւը եպոսին: Իր փոխանորդը Իսլաւատը եղան. ալ իր Միլքիվէլիի իրաւունքը կը փոխանցէ Առատաւատաւը եպոսին: Այս գործողութիւնը պաշտօնապէս կը կատարուի զատարանի անդէն և զատական պաշտօնագիրով ՁԿՎ (= 1522) Բենեդիկտին: Եթէ Թլիգուրանցի'ն է Ս. Յակոբի գործերուն վարիչը և ատենց հասը կեցողը, անձամբ ու յաջորդով, այն ատեն իւրեքին կը տեսնուի թէ բաւական ժամանակ և կորով նուիրած է բանաստեղծ կաթողիկոսը երեսուցէմի համար, ծառայութիւն ըսուելու արժանի փառաւոր գործունէութեամբ մը:

Ինչպէս որ կը տեսնուի, Թլիգուրանցի կաթողիկոսին կեանքը, գրեթէ անձամբ կը մնայ իր վախճանումը տեղի ունեցած պիտի ըլլայ 1525ի Մայիսէն յառաջ վահկայի մէջ, որովհետեւ կ'ըսուի թէ հո'ն թաղուած է (Սխումս, էջ 535բ):

Բ. Ե.

Ո Ւ Ղ Ե Ր Չ

Մատուցուած Պարսկ-Հնդկաստանի քննի Հայոց Առաջնորդ Գեոր. Մարտիկ Արքեպիսկոպոսին, իւր՝ Մուշաբնա (Ջալա) խաղաք ժամանելու օրը, 3 Մայիսի 1928, Տեղական Ազգային Վարչութեան նախագահ Պրն. Հայրապետ Գաբրիէլի կողմից:

Նորին Բարձր Արքեպիսկոպոսին
Տ. Մարտիկ Արքեպ. Տէր-Մովսիսեան
Մարտիկոս
Բարեխնամ Առաջնորդի թեմին Հայոց
Պարսկ-Հնդկաստանի
Աստ

Գերապատելի Հայր,
Թոյլ տուեցէք, խնդրեմ, քաղաքիս Հայ Հասարակութեան կողմից մաղթելու Ձեզ բարձր զարդար այս գեղեցիկ կղզւոյ հիւրընկալ ամենքը:

Սուրբարայի Հայ Հասարակութիւնը, որ քառորդ զարկն աւելի է որ բախտ չէ ունեցել ընդունելու իւր թեմակալ Ս. Առաջնորդներէն, այսօր կը ջաննիկ է զգուժ իրեն որ բախտ է ունենում ընդունելու իւր մէջ իւր սիրեցնելու թեմակալ Արքեպիսկոպոսին Առաջնորդին, որը արձանարճելով Երկար և ամսանկի ճանապարհորդութիւն ի սէր իւր տարագիր հօտին, բարեհաճել է այցելել նաեւ այս քաղաքը և մխիթարել իւր հօտին թէ հողեպէս և թէ ազգայնապէս:

Սուրբարայի Հայ Հասարակութիւնը, իրրե հարապատ զուակներ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, ողջունում է Ձեզ իրրե ակտնուար միարանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և իրրե արժանաւոր ներկայացուցչի Ամեն. Հայոց Վեհ. Հայրապետի, որը իւր հետ բերել է իւր պանդուխտ զուակների համար Մայր Աթոռի և նորա արժանաւոր Գահակալի հովուապետական օրհնութիւնները և մեր վերաջինեղ Հայրենիքի մխիթարական և սրբասպանդիչ լուրեր:

Սուրբարայի Հայ Հասարակութիւնը, ողջունում է Ձեզ իրրե բարեխնամ Առաջնորդի Պարսկ-Հնդկաստանի Հայոց ընդարձակածաւլ թեմի և իրրե արժանաւոր Աթոռակալի հռչակաւոր Ս. Ամենափրկիչ

